



## HOKEHANKISD



**ARCHPRIEST SAHAG VERTANESIAN** (20<sup>th</sup> Anniversary)  
**YN ARMENOUHI K. VERTANESIAN** (5<sup>th</sup> Anniversary)  
**MARIE PASHAYANI** (4<sup>th</sup> Anniversary)  
**ALICE K. ESKENIAN** (1<sup>st</sup> Anniversary)

Requested by: Der Hayr, Board of Trustees

Jacques & Maro Nalabandian and Family  
 Varoujan & Nora Santourian and Family  
 Brian & Dzovig Peterkin Vertanesian  
 Harout Eskenian  
 Miguel Molina & Ani Eskenian and Family

**ALICE KAZAZIAN KAHKEJIAN** (40<sup>th</sup> Day)

Requested by: Der Hayr, Board of Trustees

Armen Kahkejian and Family  
 Peklar Kahkejian and Family  
 Zepyur Aghkejian and Family

### ՅԻՍՆԱԿ / HISNAG / ADVENT

«Յիսնակ»ը յիսուն օրերու միջոց մըն է, որուն կը յաջորդէ Աստուածայայտնութեան տօնը: Ժամանակին, Մեծ Պահքի նման պարտադրուած պահք էր՝ 50 օրերու տեւողութեամբ, բայց այժմ վերածուած է երեք շաբաթապահքերու: Առաջին շաբաթը կը կոչուի «Յիսնակաց Պահք», երկրորդը, որ ձմեռնամուտի պահքն է, կը կոչուի «Ս. Յակոբի Պահք» եւ երրորդը, վերջին շաբաթը՝ «Ս. Ծննդեան Պահք»:

Յունուար 6-էն ետ հաշուելով 50 օր, կը յանգինք Նոյեմբեր 18-ին. անոր մօտիկ կիրակին ալ կ'ըլլայ Յիսնակի Բարեկենդանը:

This is a period of fifty days, which precedes Theophany, and formerly, as Great Lent, constituted a period of total fasting. At present, aside from the usual Wednesday and Friday fasts, it consists of fasting for three weeks: the first week under the designation, *Hisnagatz Bahk* (Quinquagesima or Advent); the second week, the fast of the arrival of the winter, is known as the Fast of St. James; and the last week, the Christmas fast.

Counting backwards fifty days from January 6 brings us to November 18, the nearest Sunday being *Hisnagatz Paregentan* which with an immovability of seven days, may fall on any day between November 15 and 21.

## Ս. ԽԱՉ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

### SOORP KHATCH ARMENIAN APOSTOLIC CHURCH

☞ SUNDAY, DECEMBER 21, 2025 ☜



ՉԱՅՆ ԳԿ

ՅԻՍՆԱԿԻ Ե. ԿԻՐԱԿԻ

FIFTH SUNDAY OF ADVENT

Ս. Պատարագ Առ. Ժամը 10:30-ին Հեռարձակում  
 Divine Liturgy 10:30 a.m. Live Streamed

Soorp Khatch Armenian Apostolic Church

4906 Flint Drive, Bethesda, MD 20816

Office Hours: 10:00 a.m-2:00 p.m.

Phone: (301) 229-8742; Fax: (301) 229-9393

E-mail: [soorpkhatch@verizon.net](mailto:soorpkhatch@verizon.net)

Web Page: [www.soorpkhatch.org](http://www.soorpkhatch.org)

Archpriest Fr. Sarkis Aktavoukian, Pastor

Home Phone: (301) 977-1863; Cell: (301) 787-5506

### DER VOGHORMIA

For All Sick



Parishioners

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ԵՐԱՅԵՅԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿՆ**

----- (4.26 — 5.10) -----

Ուստի համարձակօրէն մօտենանք Աստուծոյ շնորհքի  
աթոռին, ողորմութիւն գտնելու եւ շնորհք ստանալու համար,  
որպէսզի անոնք մեզի օգնեն անհրաժեշտութեան  
պարագային:

Արդարեւ, ամէն քահանայապետ, որ մարդոց մէջէն  
կ'ընտրուի, պաշտօն ունի՝ մարդոց կողմէ Աստուծոյ հետ  
յարաբերութեան մէջ մտնելու եւ անոնց մեղքերուն համար  
նուէրներ եւ զոհեր մատուցանելու: Եւ որովհետեւ ինք ալ  
մարդ է, կրնայ հասկնալ մարդոց տգիտութիւնն ու  
փորձութիւնները եւ կարեկցիլ անոնց, քանի ինք եւս նոյն  
տկարութիւնները ունի: Ասոր համար է, որ ինչպէս  
Ժողովուրդին՝ այնպէս ալ իր սեփական մեղքերուն համար  
պէտք է զոհեր մատուցանէ:

Գիտէք նաեւ, թէ ոեւէ մէկը չի՝ կրնար ինքն իրեն  
քահանայապետութեան պատիւը առնել, այլ՝ Աստուած է որ  
զայն այդ պաշտօնին կը կանչէ, ճիշդ ինչպէս Ահարոն  
կոչուեցաւ: Նոյնպէս ալ Քրիստոս, ինքն իրեն չառաւ քահա-  
նայապետութեան պատիւը, այլ զայն ստացաւ Աստուծմէ, որ  
իրեն ըսաւ. «Դուն իմ Որդիս ես, այսօր քեզ ծնայ», իսկ ուրիշ  
տեղ մը կ'ըսէ. «Դուն յաւիտեան քահանայ ես, Մելքիսեդեկ  
քահանային պէս»:

Իր երկրաւոր կեանքի ընթացքին, Յիսուս մեծ աղաղա-  
կով ու արցունքով աղօթեց եւ աղաչեց Աստուծոյ, որ կրնար  
զինք մահուընէ փրկել: Եւ Աստուած զինք լսեց, որովհետեւ  
խոնարհ էր ան եւ հնազանդ: Թէպէտ Աստուածորդի էր, բայց  
իր շարշարանքներու փորձառութեամբ սորվեցաւ թէ ի՛նչ բան  
է հնազանդութիւնը: Եւ այսպէս, կատարեալ ըլլալէ ետք,  
յաւիտենական փրկութեան պատճառ եղաւ բոլոր անոնց  
համար, որոնք իրեն կը հնազանդին, քանի Աստուած զինք  
քահանայապետութեան կոչած էր, Մելքիսեդեկ քահանային  
պէս:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆՆԷՆ**

**ԸՍՏ ՂՈԿԱՍԻ**

-(18. 9 — 14) -

(Յիսուս) այս առակն ալ պատմեց անոնց, որոնք իրենք  
իրենց համար այն համարումը ունէին թէ արդար են եւ  
ուրիշները կ'արհամարհեն:

- Երկու հոգի տաճար գացին աղօթելու, մէկը՝  
Փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած,  
ինքնիրեն կ'աղօթէր. «Աստուած իմ, շնորհակալ եմ քեզմէ՝ որ  
ուրիշ մարդոց նման՝ յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ  
այս մաքսաւորին պէս ալ չեմ: Այլ՝ շաբաթը երկու անգամ ծոմ  
կը պահեմ եւ ամբողջ եկամուտիս տասանորդը տաճարին կու  
տամ»: Իսկ մաքսաւորը հեռուն կեցած, աչքերը առանց վեր  
բարձրացնելու՝ կուրծքը կը ծեծէր եւ կ'ըսէր. «Աստուած,  
ներէ՛ մեղաւորիս մեղքերը»:

- Կ'ըսեմ ձեզի,- եզրակացուց Յիսուս,- մաքսաւորն է որ  
արդարացած տուն գնաց, եւ ո՛չ թէ Փարիսեցին. որովհետեւ ով  
որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր  
անձը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:



**2025 FEASTS**

December 23 Saints David the Prophet & Holy Apostle James  
December 25 Saint Stephen the Protomartyr  
December 27 Saints Peter and Saint Paul  
December 29 The Holy Apostle James & John the Evangelist



**Note:** Der Hayr and Board of Trustees would like to thank Mrs.  
Mary Garabadian for donating Poinsettia plants to the church and  
wish her good health and happiness.



## SCRIPTURE READINGS



HEBREWS 4:26 – 5:10

Let us therefore approach the throne of grace with boldness, so that we may receive mercy and find grace to help in time of need. Every high priest chosen from among mortals is put in charge of things pertaining to God on their behalf, to offer gifts and sacrifices for sins. He is able to deal gently with the ignorant and wayward, since he himself is subject to weakness; and because of this he must offer sacrifice for his own sins as well as for those of the people. And one does not presume to take this honor, but takes it only when called by God, just as Aaron was. So also Christ did not glorify himself in becoming a high priest, but was appointed by the one who said to him, “You are my Son, today I have begotten you”; as he says also in another place, “You are a priest forever, according to the order of Melchizedek.”

In the days of his flesh, Jesus offered up prayers and supplications, with loud cries and tears, to the one who was able to save him from death, and he was heard because of his reverent submission. Although he was a Son, he learned obedience through what he suffered; and having been made perfect, he became the source of eternal salvation for all who obey him, having been designated by God a high priest according to the order of Melchizedek.

LUKE 18:9-14

To some who were confident of their own righteousness and looked down on everybody else, Jesus told this parable: "Two men went up to the temple to pray, one a Pharisee and the other a tax collector. The Pharisee stood up and prayed about himself: 'God, I thank you that I am not like other men—robbers, evildoers, adulterers—or even like this tax collector. I fast twice a week and give a tenth of all I get.'

"But the tax collector stood at a distance. He would not even look up to heaven, but beat his breast and said, 'God, have mercy on me, a sinner.'

"I tell you that this man, rather than the other, went home justified before God. For everyone who exalts himself will be humbled, and he who humbles himself will be exalted."

## Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅ

Ս. Ստեփանոս առաջին վկան է, որ նահատակուեցաւ Յիսուս Քրիստոսը Աստուծոյ Որդին դաւանելուն համար: Ան Յիսուսի 72 աշակերտներէն մէկն էր, որ ուրիշ 6 հոգիներու հետ Նախնական Եկեղեցիին կողմէ (Պետրոս առաքեալի առաջնորդութեամբ) կարգուեցաւ եկեղեցւոյ սեղանին սարկաւազ:

Նոր Կտակարանի «Առաքելներու Գործերը» գիրքին Ծրդ գլխուն մէջ կը կարդանք եօթը սարկաւազներուն նշանակուելուն եւ Ստեփանոսի ձերբակալութեան մասին, իսկ 7-րդ գլխուն մէջ՝ իր վկայութեան եւ քարկոծումին մանրամասնութիւններուն մասին: Իր քարկոծումը պահանջողներէն մէկն ալ Սօղոսն էր, որ հետագային եղաւ Պօղոս առաքեալ:

Thirsday, December 25, is the feast day of St. Stephen the Protomartyr, who was tried by the high priests for blasphemy against Moses and God and speaking against the Temple and the Law. He was stoned to death by an infuriated mob encouraged by Saul of Tarsus, the future Saint Paul. After Christ's ascension, the apostles went about spreading the Word. It soon became apparent that more people were needed to serve the growing church community. Seven worthy individuals were called upon to serve the Holy Altar and called “deacons” (*sarkavag*). The most noteworthy of the seven was Stephen, described as a “man full of faith and the Holy Spirit” (Acts 6:5). The Feast of St. Stephen is a popular and important commemoration in the Armenian Church. It is also a day to honor all deacons of the church. St. Stephen became the first martyr of the Christian church and is therefore called the “proto-martyr.”



*On the occasion of St. Stephen (December 25), the First Deacon and Protomartyr of the Chrisitan Church, Der Hayr and the Board of Trustees congratulate all those who serve Soorp Khatch and all who are named Stepan, Stepanos, Stephen, Steven, and Panos, and wish them good health and happiness.*



*Also on the occasion of St. Peter and St. Paul (Saturday, December 27), Der Hayr and the Board of Trustees congratulate all those who are named, Boghos, Bedros, Peter and Paul, and wish them good health and happiness.*

**Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Յ Ո Յ Յ  
Ս. ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ**

**Յ Ո Ւ Ն Ո Ւ Ա Ր 2026**

**Ա Մ Ա Ն Ո Ր Ի Պ Ա Տ Ա Ր Ա Գ**

**Հինգշաբթի, 1 Յունուար, 2026.....1:00-ին**

**Ճ Ր Ա Գ Ա Լ Ո Յ Յ**

**Երկուշաբթի, 5 Յունուար, 2026**

**Առաւօտեան Ժամերգութիւն.....10:30-ին**

**Երեկոյեան Ժամերգութիւն.....6:30-ին**

**Ս. Պատարագ.....7:30-ին**

**Տնօրհնէք – սրահէն երս.....9:00-ին**

**Ս. ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ**

**Երեքշաբթի, 6 Յունուար, 2026**

**Առաւօտեան Ժամերգութիւն.....10:00-ին**

**Ս. Պատարագ.....10:30-ին**

**Զրօրհնէք .....12:30-ին**

**Կնքահայր – Փոքրիկն Արման Սարգիսեան**

**✠ ✠ ✠**

**Տ Ն Օ Ր Հ Ն Է Ք**

**Անոնք, որոնք կը փափաքին Ս. Ծննդեան Տօնին առիթով**

**իրենց բնակարանները օրհնել տալ,**

**թող բարեհաճին հեռաձայնել գրասենեակ**

**(301)229-8742**

**ՏԷՐ ՀԱՅՐՆ ՈՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ**

**ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՆ ՁԵՐ ՆՈՐ ՏԱՐԻՆ ՈՒ Ս. ԾՆՈՒՆԴԸ**

**ԵՒ ՁԵՋԻ ԿԸ ՄԱՂԹԵՆ**

**ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐՋԱՆԻԿ ՏԱՐԻՆԵՐ**

**CALENDAR FOR  
ARMENIAN CHRISTMAS AND EPIPHANY**

**JANUARY 2026**

**NEW YEAR'S DAY BADARAK**

**Thursday, January 1, 2026.....1:00 p.m.**

**ARMENIAN CHRISTMAS EVE**

**Monday, January 5, 2026**

**Morning Hour Service.....10:30 a.m.**

**Evening Service.....6:30 p.m.**

**Divine Liturgy .....7:30 p.m.**

**House Blessing – in the church hall.....9:00 p.m.**

**ARMENIAN CHRISTMAS & EPIPHANY**

**Tuesday, January 6, 2026**

**Morning Hour Service.....10:00 a.m.**

**Divine Liturgy.....10:30 a.m.**

**Blessing of the Water.....12:30 p.m.**

**Godfather – Arman Sarkisian**

**✠ ✠ ✠**

**HOME BLESSING**

**All parishioners who wish to have their homes blessed**

**on the occasion of Christmas**

**should call the Church Office to make arrangements**

**(301) 229-8742**

**DER HAYR AND THE BOARD OF TRUSTEES WISH OUR  
PARISHIONERS A HAPPY NEW YEAR AND MERRY  
ARMENIAN CHRISTMAS FOR HEALTHY AND JOYOUS  
YEARS AHEAD**